

24(417)
14.08.2015

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар ●

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԱՎԵՏԱՐԱՆՈՅԸ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՈՒՆԻ

Գերմանիայի «Հայ գործարարների միության» և Արցախի կառավարության համաֆինանսավորմամբ Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում կառուցվել է մանկապարտեզ: Բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ օգոստոսի 6-ին: Ներկա էին ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը, կրթության, գիտության, սպորտի նախարար Սլավա Ասրյանը, բարերարներ: Հնչած ելույթներում կարևորվել է նորակառույց շենքի նշանակությունը համայնքի զարգացման, մատակարարողի դաստիարակության և երիտասարդության արտահոսքը կանխելու գործում:

Համայնքի ավագանու որոշմամբ՝ միության ներկայա-



ցուցիչներ Մուրատ Աբյուզին, Պետրոս Ազատյանին և Մասիս Պետրոսյանին շնորհվել է Ավետարանոցի պատվավոր քաղաքացու կոչում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ միության նախագահ Մուրատ Աբյուզին իր գործընկերների անունից վստահեցրել է, որ օժանդակությունն Ավետարանոցի զարգացմանը միտված ծրագրերին տևական է լինելու, և իրենք հետագայում ևս մեծ սիրով մասնակցելու են համայնքային խնդիրների լուծմանը:



Մանկապարտեզը նախատեսված է երկու խմբի համար՝ շուրջ 60 երեխայի ընդգրկմամբ:

Արցախի Հանրապետության իշխանությունների անունից շնորհավորելով Ավետարանոցի բնակիչներին կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը վստահեցրել է, որ կառավարությունը շարունակելու է ուշադրության կենտրոնում պահել մանկապարտեզներ և դպրոցներ կառուցելու ծրագրերը՝ ապահովելով հանրապետության կրթական ցանցի բարելավումը:

Միջոցառման ավարտին մանկապարտեզի սաները հանդես են եկել գրական-երաժշտական ներկայացմամբ:

Այս մասին տեղեկացնում է ԼՂՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄԵՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ՆՐԱ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՂԱՐԻՉԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ Է

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, մեր հայրենակից Աշոտ Սաղյանին շատերը գիտեն: Նա ճանաչված գիտնական է նաև արտերկրում: Գիտական նվաճումների համար արժանացել է Դեկարտի անվան մրցանակի (համարվում է փոքր Նոբելյան մրցանակ), Հինաստանի 15 նահանգներում ստեղծել է գիտական ստորաբաժանումներ, լաբորատորիաներ և արդյունքում՝ 2002թ. ստացել Հինաստանի կառավարության «Բարեկամություն» շքանշանը, որը Հինաստանում ազգային հերոսից հետո երկրորդ պատվավոր պարգևն է: Այսօր էլ Գերմանիայի, Հինաստանի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և այլ երկրների հետ ակտիվորեն համագործակցում է:

ՀՀ ԳԱԱ «Հայ կենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրենն է, միաժամանակ՝ ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչը:

Մեր խնդրանքով Ա. Սաղյանը ներկայացրեց ՀՀԳԿ-ի վերջին ձեռքբերումները:

Մեր կենտրոնը հիմա բավականին լուրջ հիմքերի վրա է դրված: Նախ՝ ամբողջությամբ վերանորոգված է եվրոպական չափանիշներով, չորս արտադրություն ունենք դրած՝ կաթնաթթվային «Նարինե»-ի (բավականին մեծ հեղինակություն ունի հանրապետությունում), էկոբիոֆիտի՝ էկոլոգիապես մաքուր պարարտանյութ (կենսապարարտանյութ, որը սելիտրայի նման ոչ թե միտրատ է պարունակում, այլ օդից վերցնում է ազոտը և տալիս բույսին), տարբեր բուսական ծագման էքստրատների, կոնցետրատների, փոշիների, որոնք օգտագործվում են դեղագործության, սննդարդյունաբերության մեջ և այլն: Բավականին լուրջ նախադրյալներ ունի տարածաշրջանում և Եվրոպայի մասշտաբով լավագույն գիտական կենտրոն դառնալու: Մենք նախաձեռնություն ենք սկսել նաև ԵՊՀ-ում ֆարմացիայի ուղղությունը զարգացնելու համար, և նախապատրաստվում ենք մյուս տարվանից համատեղ ընդունելություն կազմակերպել Ռուսաստանի և Հայաստանի երկակի դիպլոմներ տալու ծրագրերով: Արդեն պայմանավորվել ենք Ռուսաստանի Բելգորոդի համալսարանի հետ, որը ֆարմացիայի առումով լավագույն համալսարաններից մեկն է: ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետը այսօր լրիվությամբ վերափոխվում է ժամանակակից լաբորատոր սեղաններ, քարտիչ պահարաններ, լրիվ այնպես, ինչպես տեսել են Գերմանիայում և Ռուսաստանում, որտեղ այսօր մեծ ուշադրություն է դարձվում գիտակրթական համալիրի զարգացմանը: Բացի դրանից, ՀՀ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ (արդեն կա պայմանավորվածություն) կստանանք նաև ֆինանսավորում անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու համար: Իհարկե, գտել ենք նաև բարերարներ Շվեյցարիայից՝ ազգությամբ հայ, հաջորդ բարերարը Շվեյցարիայից կլինի (կա պայմանավորվածություն), որոնցից ամեն մեկը առնվազն մեկ (եթե ոչ երկու) լաբորատոր սենյակ կկահավորի ամբողջությամբ:

Այս համատեքստում ակադեմիկոսն ակնարկեց, որ Արցախի գիտական կենտրոնը ևս պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի: Մի քանի տարի առաջ իրենց կենտրոնը երկու լաբորատորիա է ստեղծել այստեղ, բայց դա քիչ է, մյուս ինստիտուտներն էլ պետք է մասնակցեն: Նրա խոսքով՝ ամեն մեկը պատրաստ է իր գծով լաբորատորիա ստեղծելու: Դրա համար պետք է տարածք: ԿԳԱ նախարարն ասաց, որ տարածքը սեպտեմբերի 1-ից կտրամադրվի:



Հնչած պետք է ասել, որ եղած լաբորատորիաները լիարժեք չեն օգտագործվում, գիտաշխատողները հիմնականում իրենց փորձերը Հայաստանում են կատարում՝ տեղի մասնագետների օժանդակությամբ: Ա. Սաղյանի համոզմամբ՝ Արցախում գիտական կենտրոն ստեղծելու գերագույն նպատակը չի եղել միայն գիտությունների թեկնածուներ պատրաստելը, դա կարելի է անել նաև Երևանում: Գերագույն նպատակը եղել է աշխատող կառույց ստեղծելը:

Բոլոր դեպքերում՝ հայաստանյան ինստիտուտները, ինչու է՛լ՝ ԳԱԱ արտասահմանյան հայ անդամները պատրաստակամ են իրենց նպաստը բերելու Արցախին, եթե, իհարկե, տեղից առաջարկություն լինի, տեղեկացրեց Ա. Սաղյանը:

Ինչ մնում է ֆինանսավորմանը, Հայաստանում, առանձնապես՝ Արցախում, գիտության ֆինանսավորման հարցը լուրջ է, ասաց նա: Դրա համար Արցախի գիտական կենտրոնը, նախարարությունը, գիտության համար պատասխանատու գերատեսչությունները ունեն մի մեծ հնարավորություն՝ օգտվելու հայ բարերարների, գիտնականների աջակցությունից: «Ռուսաստանում 4 ինստիտուտ միացրած ղեկավարում է մի պրոֆեսոր, որը Արցախից է: Եթե նրան ասեն՝ մի լաբորատորիա նվիրիր, նա մեկի փոխարեն 3-ը կնվիրի», - կարծում է Ա. Սաղյանը: Նրա կամոյով՝ Հայաստանի նման պետությունը, որը չունի հարուստ ընդերք, նավթ, գազ և այլն, տնտեսությունը կարող է զարգացնել միայն ու միայն գիտական արտադրանքի, գիտական արդյունքների հենքի վրա, ինչպես Ճապոնիայում է: Բնական ռեսուրսների առումով ճապոնիան ավելի աղքատ երկիր է, քան Հայաստանը, գոնե մենք թար, մետաղ ունենք, ճապոնիան դա էլ չունի: «Հատկապես կենսատեխնոլոգիայի բնագավառը վերցնենք. Արցախը դեռ թողնենք մի կողմ, Հայաստանի տնտեսության զարգացումը առանց կենսատեխնոլոգիական արտադրության, որը գյուղատնտեսության, դեղագործության հիմքն է, հնարավոր չէ պատկերացնել: Դրա համար պետք է գործարան, որտեղ դրվի արտադրություն: Հայաստանի նման պետությունների տնտեսության զարգացման հիմնական գրավականը գիտատեխնիկական բաղադրիչի զարգացումն է: Իսկ դա կախված է մի քանի գործոններից՝ ֆինանսավորում, պայմաններ, ինտելեկտ:

Գումար ծախսել գիտության վրա՝ առանց ակնկալելու արդյունքներ, անհ-

մաստ է: Գերմանիայի օրինակը բերեց, որն այսօր ամենահարուստ երկիրն է Եվրոպայում: Բայց ամենահայտնի պրոֆեսորը, որին պետությունը երեք տարի ֆինանսավորում է որպես գիտնական, եթե չորրորդ տարում արդյունքները չի ներդրում արտադրության մեջ, պետությունը նրա հետ պայմանագիրը խզում է»:

Ըստ նրա՝ գիտությամբ զբաղվելը միայն հարուստ երկրի մենաշնորհը չէ: «Աղքատ երկիրը գիտությամբ զբաղվում է և պետությունը դարձնում հարուստ», - այս համոզման է նա: Դրա համար բոլորը պետք է համակարգված աշխատանք կատարեն՝ կառավարությունը, նրա լիազոր մարմինները, գիտահետազոտական ստորաբաժանումները և իհարկե՝ անձինք:

Նշենք, որ օրերս ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանն ընդունել է Արցախի գիտական կենտրոնի աշխատակազմին՝ ԿԳԱ նախարար Սլավա Ասրյանի զվիավորությամբ: Ինչպես տեղեկանում ենք ԼՂՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից, վարչապետը կարևորել է գիտության նշանակությունը տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում: Կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը ներկայացրել է գիտական կենտրոնի գործունեությունը, ձեռքբերումներն ու խնդիրները: «Ուրախալի է տեսնել նմանատիպ կենտրոնի գործունեությունը, սակայն պետք է աշխատեք դրա հետագա բարելավման ուղղությամբ»:

Վարչապետը հորդորել է թեմաների ընտրության ժամանակ շեշտադրումը կատարել կիրառական աշխատանքների վրա՝ ելնելով անհրաժեշտությունից և առաջնահերթություններից: Կառավարության ղեկավարը պատրաստակամություն է հայտնել կիրառական հետազոտությունների արդյունքները դնել տեղական արտադրության հիմքում և աջակցել դրանց առաջխաղացմանը: Հանդիպման ժամանակ քննարկվել են կենտրոնի գործունեությունը վերաբերող մի շարք հարցեր, կառավարության ղեկավարը տվել է համապատասխան հանձնարարականներ:

Առիթն օգտագործելով՝ մեծանուն գիտնականից հարցրինք նաև իր հայրենի գյուղի՝ Չափարի դպրոցի հետ կապի մասին: Ասաց, որ կապը միշտ կա, իր գրքերից ուղարկում է դպրոցին: Մի քանի տարի առաջ, երբ դպրոցի վերակառուցումը դեռ ընթացքավորված չէր, համագյուղացի բարերար Վարուժան Գրիգորյանի հետ ինքը խոսել էր, որ պատրաստ է իր երիտասարդ գիտնականներին ուղարկել մի քանի ամիս գյուղում աշխատելու: Երիտասարդները հաճույքով կզան Արցախ, Հայաստանի երիտասարդների մոտ կա մեծ նախաձեռնություն. եթե տեղի, սննդի հարցերը լուծեն, մեծ հաճույքով կզան Արցախում աշխատելու. մեկ ամիսը հերիք է, որ համակարգչային ծրագրերը լրիվությամբ կարողանան սովորեցնել թեկուզ ուսուցիչին: Այսօր կան համակարգչային ծրագրեր քիմիայի, կենսաբանության, դեղագործության վերաբերյալ: Ամբողջ դեղագործության կառավարումը այսօր իրականացվում է համակարգչային ծրագրերի միջոցով: Ընդ որում, իր ղեկավարած կենտրոնը պատրաստ է երիտասարդներ ուղարկել Չափարի միջնակարգ և ընդհանրապես Արցախի դպրոցներ: «Պետք է ստեղծել այդ կապը, երիտասարդ կարգերին պետք է օգտագործել նաև դպրոցներում», - ասաց ակադեմիկոսը:

Ս. ԽԱԶՆՐՅԱՆ

ԸՆԹԱՅ

«ԳԻՏՈՒԹԱՆ ՄԵՋ ԵՐԵ ԶԱՆՁՐԱՆՈՒՄ ԵՄ, ՈՒՐԵՄՆ՝ ԴՈՒ ԵՄ ԶԱՆՁՐԱԿԻ ԳԻՏՆԱԿԱՆ»

«Լուսարար»-ի նախորդ համարում տեղեկացրել էինք ՀՀ գիտության պետական կոմիտեի հետ համատեղ Արցախի գիտական կենտրոնում իրականացվող գիտական աշխատանքների մասին: Դրանցից մեկը Արցախի տարածքում էկոլոգիաբերական առանձնահատկությունների վերաբերյալ հետազոտություններն են: Թեմայի ղեկավարը Արցախի գիտական կենտրոնի երիտասարդ գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու Քրիստինե Սարգսյանն է: Հետազոտությունները իրականացվել են ՀՀ ԳԱԱ էկոլոգիանոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական գծով փոխտնօրեն, աշխարհագրական գիտությունների թեկնածու Լիլիթ Սահակյանի հետ համատեղ:

Ք. Սարգսյանի խոսքով՝ համատեղ հետազոտությունը ծրագրի շրջանակում սկսել են 2011-2013թթ.: Իրականացրել են Ստեփանակերտ քաղաքի, իսկ 2013-15թթ.՝ Արցախի գետերի երկրաբանական առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված հետազոտություններ, քանի որ ԼՂՀ գետերի ջրերի որակի գնահատման մասին տեղեկատվություն չկա, և չկա նաև պետական մոնիթորինգային ծրագիր: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ԼՂՀ տնտեսության զարգացման տեմպերը և միտումները, մակերևութային ջրերի գնահատման հարցը դառնում է արդիական: Երկու ծրագրերի ընթացքում էլ, բացի գիտական հետազոտությունից, իրականացրել են ուսումնասիրառական դասընթացներ: Ըստ նրա՝ ծրագրի նպատակն է իրականացնել պիլոտային հետազոտություն՝ բացահայտելու Արցախի տարածքի էկոլոգիաբերական առանձնահատկությունները, տարբեր գետերի ջրահավաք ավազաններում ծանր մետաղների որակական և քանակական գնահատումը, ինչպես նաև Արցախի գիտական կենտրոնի համար համապատասխան մասնագետների պատրաստումը:

Թեմայի խորհրդատու Լիլիթ Սահակյանը տեղեկացրեց, որ Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատողի հետ միասին շրջել են Արցախում, անցած չորս տարիների ընթացքում ուսումնասիրել են Ստեփանակերտ քաղաքի էկոլոգիաբերական միակերպ առանձնահատկությունները՝ հասկանալով՝ ինչքանով է աղտոտված Ստեփանակերտը և երկրորդ նախագծով ուսումնասիրելու գետերի ջրերի որակը: Շատ հետաքրքիր տվյալներ են ստացել: Նախ՝ այն, որ Ստեփանակերտը գերմաքուր քաղաք է: Մաքուր ասելով հասկանում են՝ գերծանր մետաղներից: Դա շատ լուրջ այցեքարտ է Ստեփանակերտի համար: Մաքուր տարածքը զբոսաշրջության զարգացման ամենակարևոր խթանիչներից է: Հատկապես արտասահմանցիները շատ գնահատում են դա: Առողջ միջավայրում կարելի է ապրել, հանգստանալ: Այս ամենը պետք է հնչողություն ստանա, ամեն հայ ու արցախցի իր պարտքը համարի ասելու, որ այսպիսի հետազոտություն է արվել, ու Ստեփանակերտը աշխարհի մաքրագույն քաղաքներից մեկն է:

Ծանր մետաղները աղտոտիչներ են, որոնք ամբողջ աշխարհը համարում է բավականին վտանգավոր տոքսիկ մարդու առողջության համար: Դրանք առաջացնում են տարբեր հիվանդություններ, ընդհուպ մինչև՝ քաղցկեղ: Գիտնականի տվյալներով՝ իրենց հետազոտած ՀՀ քաղաքները՝ Երևանը և համապատասխան շրջանները, աղտոտված են: Ստեփանակերտը այդ առումով կարելի է համարել ամբողջությամբ մաքուր: Քաղաքից դուրս էլ, ինչքան

հնարավոր է, ուսումնասիրել են, և այն, ինչ բացահայտել են, վտանգ չի ներկայացնում մարդու առողջության համար:

Նաև գնահատել են Ստեփանակերտի մանկապարտեզների անվտանգությունը հողերի աղտոտման տեսակետից: Ինչու՞ մանկապարտեզների, որովհետև երեխաները հասարակության ամենախոցելի խմբերն են: Մանկապարտեզի հողերն էլ գտնվում են նորմայի սահմաններում:

Բնակիչների խնդրանքով հետազոտել են Ստեփանակերտի խմելու ջրերը: Այստեղ որոշ խնդիրներ կան ծանր մետաղների տեսակետից: Դաղիվանք գյուղի բնակիչների խնդրանքով հետազոտել են այնտեղի աղբյուրները: Նրանցից որոշները որակական հատկանիշներով հասնում են թույլատրելի ամենաստորին սահմանին: Գիտնականը պատկան մարմինների ուշադրությունը հրավիրում է Արցախի, մասնավորապես՝ Ստեփանակերտի խմելու ջրի լայնածավալ ուսումնասիրության անհրաժեշտության վրա: Դաշտում մեծ բաց կա՝ գիտական հետազոտության առումով:

Ծրագրերը շարունակական լինելու դեպքում գիտաշխատողները ցանկություն

օրինակ, երբ ինքը նոր էր սկսում գործունեությունը իրենց գիտական կենտրոնում, տնօրեն պարոն Սաղաթեյանը ասեստավորում ամցկացրեց, թե արդյոք գիտնականը անգլերեն «Որովհետև եթե չգիտես անգլերեն, ուրեմն դու տոտալ բնույթի գիտնական ես, որը շան չունի դուրս գալու միջազգային ասպարեզ», -ասաց նա: Դրա համար ռեսուրսներ տրամադրվեցին, երիտասարդները անգլերեն պարապեցին 6-9 ամիս:

Մյուս անհրաժեշտ հմտությունը համակարգչային որոշակի գիտելիքների տիրապետելն է՝ word-ից, excell-ից մինչև թեմայի շնորհանդես սարքելը: Նրա կարծիքով՝ Արցախի գիտական կենտրոնի իր երիտասարդ գործընկերները շատ ռոմանտիկ են պատկերացնում ամեն ինչ, որ եթե լաբորատորիան լինի, այսօր կեթ այն աշխատելու է, և նորից բերեց Երևանի՝ իրենց կենտրոնի օրինակը, որը լավագույն լաբորատորիաներից մեկն ունի, բայց ստեղծվելուց հետո մոտ 10 տարի անցավ, մինչև կարողացան դնել գիտական լիարժեք հիմքերի վրա: Այսինքն՝ դա բարդ գործընթաց է, մի քիչ ավելի իրատեսական դաշտում աշխատելու համար կպահանջվեն շատ ժամանակ ու մասնագետներ: Դա միայն մեկ թեմայի շրջանակներում արվելիք գործ է, ենթակառուցվածք է, որ պետք է ստեղծվի:

Երրորդ պարտադիր հմտությունը հետազոտության տրամաբանությանը տիրապետելն է: Այս խնդիրը Հայաստանում էլ կա: Ուսանողները, ավարտելով բուհերը, չեն տիրապետում հետազոտության տրամաբանությանը. որտեղից սկսել, ուր տանել, ոնց ձևակերպել: Հենց թեկուզ զեկուցում կարողալու համար անհրաժեշտ է ունենալ որոշակի հմտություններ, որպեսզի ոչ քննցնես լսարանին, ոչ արագ խոսես: Արանք պարզագույն բաներ են, որ գիտության մարդը պետք է ունենա, այսինքն՝ լինես գիտական, նաև լինես՝ մատչելի: Այնքան բան է պահանջվում գիտնականից, որ այսօր չունեն և՛ Արցախում, ինչու էլ, և՛ Հայաստանում:

Այսօր երիտասարդները չեն ընտրում գիտության ճանապարհը՝ նյութական ակնկալիք չունենալով: Ի՞նչ խորհուրդ կտար Լ. Սահակյանը:

-16 տարի աշխատում եմ գիտության ասպարեզում, չեմ կարող ասել, որ գիտության ճանապարհով գնացողը հարուստ է լինելու: Ուղղակի հետաքրքիր աշխատանք է, գուցե մարդկային գործունեության ամենադանդաղ առաջընթաց ունեցող ստեղծագործական ոլորտը: Պարզապես պետք է ավելի շատ սիրես այդ գործը: Պետք է համբերություն՝ շատ սովորելու, անընդհատ սովորելու ու ճկուն լինելու, որովհետև այսօր կյանքն էլ է արագ փոփոխվում, գիտությունը՝ առավել և՛: Գիտության մեջ միջակայքային համար դժվար է լինել ճկուն, -երիտասարդ գիտնականներին խորհուրդ է տալիս Լ. Սահակյանը: -Ստեփանակերտ քաղաքի երկրաբանական քարտեզը ստանալու համար մոտավորապես տարիներ են թիմն աշխատել է: Ուզում եմ ասել՝ գիտությունը նյարդերը և համբերությունը լարելու բնագավառ է: Դու պետք է ենթադրությունը տարիների ուսումնասիրության ընթացքում կան հերքես, կան ապացուցես: Բարդ է, բայց եթե կան մարդիկ, որոնք հետաքրքրված են և սիրում են, գիտությունը նրանց համար չձանձրացնող մասնագիտություն է: Գիտության մեջ եթե ձանձրանում ես, ուրեմն դու ես մանձրալի գիտնական:

ԱՎԵԼԻ ԴԱՏՐԱՏՎԱԾ ԳԻՏՈՐՂՆԵՐ ԵՆ ՉԼՈՒՄ ՏՏ ՈԼՈՐՏԻ ՖԱԿՈՒՆԵՏՆԵՐ

ԵՊՀ դասախոս, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանի դիտարկումներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը ՀՀ տնտեսության ամենարագ զարգացող ճյուղերից է. պատահական չէ, որ ուսանողների 10%-ն ընտրել է հենց ՏՏ ոլորտին անցնելու մասնագիտացում: Ու քանի որ տնտեսագիտությունն էլ մոդայիկ մասնագիտություն է, ՀՀ բուհերի սովորողների 19%-ն էլ ընտրել է տնտեսագիտություն և կառավարում մասնագիտացումը: Փորձագետի փաստարկմամբ՝ տնտեսագիտության կամ կառավարման մասնագիտությունների գծով Հայաստանում տարիներ առաջ վիճակն «ախավոր» էր, մինչդեռ վերջին տարիներին դիմորդների թվի նվազում է նկատվում: Դա պայմանավորված է նրանով, որ հասարակությունը վերջապես հասկացել է, որ Հայաստանին այդքան տնտեսագետներ պետք չեն, հասարակության որոշակի խավեր էլ հետ են կանգնել տնտեսագիտական մասնագիտություններ ընտրելուց: Իմիջիայլոց, ոչ միայն դիմորդների թվի նվազումն է նկատվում, այլև՝ անցողիկ թվանշանների: Օրինակ՝ 10 տարի առաջ 48-47 միավորից պակաս հավաքած դիմորդները չէին կարողանում ընդունվել տնտեսագիտության գծով որևէ ֆակուլտետ, մինչդեռ տարվա ցուցանիշներով 30 միավորից քիչ հավաքած էլ կարող է ընդունվել, օրինակ՝ պետհամալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: Գիշտ է, պետպատվերի անցողիկ շեղբ բարձր է, բայց վճարովին ցուցանիշներն արդեն իջել են: Շատ երեխաներ «տնտեսագիտություն» անվան հետեւից այլևս չեն ընկնում, քանի որ գիտեն՝ իրենց կարիերան ավարտվելու է ինչ-որ բանկում՝ հասարակ աշխատանք կատարելով, որի համար բնավ պարտադիր չէ տնտեսագետ լինելը:

Ինչ վերաբերում է ՏՏ ոլորտին, Սերոբ Խաչատրյանի ձեռնարկմամբ՝ «Կարիքի տեսանկյունից դիտարկելու դեպքում ՏՏ ոլորտ գնացող ուսանողների 10%-ը փոքր թիվ է, որովհետև միակ ոլորտն է Հայաստանում, որը շեշտակի աճում է, և բացահայտ հայտարարվում է, թե կա աշխատատեղերի կարիք: Մյուս կողմից էլ՝ եթե ՏՏ-ն համեմատես տնտեսագիտության հետ, այստեղ էլ հակառակ միտումն է նկատվում: ՏՏ ֆակուլտետների անցողիկ միավորը բարձրացել է, ավելի պատրաստված դիմորդներ, ավելի գիտակից ընտրություն կատարելով, գնում են ՏՏ ֆակուլտետներ: Վստահ եմ, որ ՏՏ ոլորտի դիմորդների թիվն ավելի է աճելու, որովհետև «Թունոն» է իր դերը կատարելու, «Սիմֆոնիսը», որը համագործակցում է համալսարանների հետ և ուսանողներին ընդունում է աշխատանքի: Հնարավոր է՝ շատ ֆակուլտետներից հոսք լինի դեպի ՏՏ ոլորտ»: Իսկ այն հարցին, թե ինչու՞ դիմորդներն ավելի քիչ են դիմում ֆիզիկայի ֆակուլտետ, աստղագետների քիչ են դառնում, այն դեպքում, երբ աստղագիտությունը բարձր վարձատրվող, պահանջված մասնագիտություն է աշխարհում, երիտասարդները կարող են նաև «դրսի» հետ կապված հեռանկարներ ունենալ, Ս. Խաչատրյանը պատասխանեց. «Մի քանի գործոն միանալով՝ տալիս են այդ նեգատիվ էֆեկտը: Առաջինն այն է, որ ֆիզիկայի դասագրքերը ծանրաբեռնված են, գրված՝ ակադեմիական ոճով: Դրանք լավ դասագրքեր են, բայց բացառիկ տղանը ունեցող երեխաների համար են: Երկրորդը ուսուցիչների խնդիրն է, հատկապես գյուղական համայնքներում, որտեղից կարող են դուրս գալ լավ ֆիզիկոսներ, բնատուր տաղանդ ունեցող երեխաներ: Ցավոք, գյուղական դպրոցների համար շատ դժվար է ֆիզիկայի լավ ուսուցիչներ գտնելը, բացի այդ՝ գյուղական դպրոցների շրջանավարտները չեն դիմում բնագիտական մասնագիտությունների գծով: Հանձախ, երբ գյուղի ֆիզիկայի ուսուցիչը մահանում է, թոշակի է գնում կամ գյուղից հեռանում է, չեն կարողանում ինչ-որ մեկին գտնել, ու ստիպված հարակից առարկաներ դասավանդողներն են ֆիզիկա դասավանդում: Երրորդ խնդիրը դպրոցներում լաբորատորիաների բացակայությունն է, որտեղ էլ, գրեթե, տեսականոն են կարող ֆիզիկա սիրել: Եվ վերջինը՝ ֆիզիկան դժվար առարկա է, իսկ այսօրվա երեխաները աշխատում են խուսափել դժվարություններից: Նաև հասկանում են, որ Հայաստանում գիտության վիճակը լավ չէ: Հանձախ ֆիզիկայի ֆակուլտետ ընդունվում են դիմորդներ, որոնք թույլ են ֆիզիկայից, քանի որ մրցույթ չկա, ու դրանք միավորներով պարզապես անցել են: Միայն մի քանի գործոնի համադրմամբ ստացվում է մնացած տիպի պատկեր: Նույնն է վիճակը քիմիայի պարագայում. Հայաստանում քիմիական արդյունաբերությունը փլուզվել է, աշխատանք գտնելու հնարավորությունները շատ չեն»:

Սերոբ Խաչատրյանը համոզված է, որ պետք է գյուղում աշխատող մասնագետներին խրախուսել, ինչպես դա արվում է այլ երկրներում. «Օրինակ՝ ԱՄՆ խաղաղության կրպակի կամավորները երկու տարի Հայաստանի գյուղերում դաս են տալիս: Ինչու՞ են նրանք գալիս հեռավոր Հայաստան: Գալիս են, որովհետև իրենց հերթում կարիերայի կառուցման ճանապարհին դա հաշվի է առնվում: Հայաստանը չի կարող երիտասարդ մասնագետին պարտադրել անպայման գյուղ գնալ, ինչպես դա արվում էր խորհրդային տարիներին, բայց խրախուսական բաներ կարելի է գտնել: Օրինակ՝ եթե մարդը գյուղում մանկավարժ է աշխատել, ինչ-ինչ մրցույթների ժամանակ կարելի է առավելություն տալ նրան, կամ աշխատավարձի որոշակի բարձրացում լինի: Ներկայումս մի ծրագիր կա՝ Teach for Armenia, որը այդ ուղղությամբ քայլեր է առնում: 15 երիտասարդ գյուղերում դասավանդելու են, ընդ որում, եւ դպրոցից են աշխատավարձ ստանալու, եւ հիմնադրամիջոց»:



ունեն զբաղվելու Դոմբոնի հանքի ազդեցության գնահատմամբ՝ պարզելու, թե արդյո՞ք Հայաստանի տիտուր փորձը կրկնվում է Ղարաբաղում: «Մենք Հայաստանում ունենք շատ դառը փորձ, երբ ունենք հանքալեռնային բուռն զարգացում, իսկ մյուս կողմից խոսում ենք էկոլոգիական անվտանգ սննդամթերքի մասին: Հաճախ այս երկուսը մյուս տարածքի մեջ են լինում, դրա համար մենք ունենում ենք սննդի անվտանգության հարցեր», -ասաց Լ. Սահակյանը:

ՀՀ գիտական պետական կոմիտեի և Արցախի գիտական կենտրոնի համատեղ նիստում Լ. Սահակյանի կողմից բարձրացվեց երիտասարդ գիտնականների կրթության մակարդակի, մասնավորապես՝ տարրական հմտությունների տիրապետման հարցը: «Այսօր աշխարհում գիտնական համարվելու համար, բացի մասնագիտական գիտելիքներից, անհրաժեշտ են շատ ու շատ հմտություններ՝ պարզագույնից մինչև ավելի բարդը: Կարծում եմ՝ այն ռեսուրսները, որոնք ներդրվում են կրթական մակարդակի բարձրացման համար, մեղմ ասած՝ բավարար չեն, որովհետև մենք պարզագույն բաներից սկսած սովորում ենք միասին: Դա շատ ժամանակ ու ջանք է պահանջում: Դրա համար շատ հանձախ ինչ-որ բաներ ավելի խորը չենք ուսումնասիրում, ինչքան որ ես կուզենայի, որպես գիտության աշխատող, անել»:

Պարզագույն հմտությունների մեջ մտնում է օտար լեզուների իմացությունը: Խոսքը ռուսերենի մասին չէ, որը բոլորը գիտեն Հայաստանում և Արցախում: Այսօր գիտությանը զբաղվելու համար ռուսերենը բավարար չէ: Պետք է գոնե իմանալ երկրորդ օտար լեզուն, որն անգլերենն է՝ գիտական ամենատարածված լեզուն: Այդ խնդիրը շատերն ունեն: Լ. Սահակյանը բերեց մի

ԳԻՏԱԿԱՆ

ՈՒՒՍԱԿԱՆ ԶԱՆԵՐ. ԱՌԱՆՑ ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԱՎԻՍԱՆՈՎԻ ԽԱՐՄ-Ը ԴԺՎԱՐ ԹԵ ԴԱՌՆԱՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ



Խորհրդային կուսակցական ղեկավարները չեն ներել Ալիխանովին(Ալիխանյան) այն բանի համար, որ նա, անտարբեր լինելով ԽՍՀՄ-ի նկատմամբ, գործարքի չմտավ իր խղճի հետ և փրկեց շատ հրեաների բռնադատումներից:

Աբրահամ Իսահակի Ալիխանով(Ալիխանյան, ծնվ. 1904թ., փետրվարի 20-ին(մարտի 4-ին), Խորհրդային ֆիզիկոս: ԽՍՀՄ-ում միջուկային ֆիզիկայի հիմնադիրներից և ատոմային ռումբի ստեղծողներից մեկը: Տեսական և փորձարարական ֆիզիկայի հիմնադիրը, ԽՍՀՄ ակադեմիայի ակադեմիկոս(1943), ՉԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս(1943), Ստալինյան(Լենինյան) եռակի մրցանակակիր:

Ակադեմիկոս Ա. Ալիխանովը, առանց որի աշխատանքների ԽՍՀՄ-ը դժվար թե դառնար միջուկային տեղաբաշխման, հեռացվել էր իր կյանքի նախագծից՝ պրոտոնների արագացուցիչ, երբ նրա կառուցումը փաստորեն ավարտված էր: Այդպես էին որոշել ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարության չինովնիկները: Արդյունքը տխուր էր. կաթված, ինստիտուտի տնօրենի պաշտոնից հեռացում և վարչաժամ մահ: Հետաքրքիր է, որ հայ գիտնականից Ռուսաստանում վրեժ են լուծում մինչև հիմա, նրա մահից հետո էլ: Իր կողմից հիմնադրված տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը (ՏՓՖԻ) անցյալ դարի 70-ական թթ. կրում էր Ալիխանովի անունը: Չնայած աշխատակիցների բողոքին՝ Ռուսաստանի ներկայիս իշխանությունները հրաժարվում են վերադարձնել հայ գիտնականի ազգանունը հիմնարկի պաշտոնական անվանը: Այժմ այն կոչվում է «Կուրչատովի ինստիտուտ» գիտահետազոտական կենտրոն:

Շատերին է ծանոթ այս իրավիճակը. մարդուն համեմարարում են անել ինչ-որ գործ, որը նա ցանկանում էր անել շատ վաղուց: Նա սկսում է գործը, նրան ուղեկցում է հաջողությունը, նա թևավորված արդեն տեսնում է հիանալի ավարտը և հանկարծ... «վերևները» որոշումով նրան հեռացնում են իր գործից, իսկ համարյա ավարտված նախագիծը տալիս մեկ ուրիշի: Իսկ առաջանցիկ բաժինը մնում է միայն ցավը, հիասթափությունը:

Նման իրավիճակ տեսնում ենք և մեր կողմից: Այդ մասին կարող է պատմել վերջին պահին դերը իր ձեռքից առած դերասանը, և՛ բիզնեսմենը, որի ընկերությունը փակել են շրջայցի ընթացքում, և՛ ուսուցիչը, որից վերցրել են սիրելի դասարանը: Այդ ամենը դժվար է տանել: Հատկապես այն ժամանակ, երբ ավարտման փուլում են խլում գործը, որին նա նվիրել է իր ողջ կյանքը:

Հենց նման ձևով են վարվել հայրենական միջուկային ֆիզիկայի հիմնադիրներից մեկի, Ռուսաստանում ծանր ջրում ռեակտորի է ծանր իոնների արագացուցչի առաջին ստեղծողի՝ ակադեմիկոս Աբրահամ Ալիխանյանի հետ: Մի մարդու, որն իր ողջ կյանքը տվել է միկրոաշխարհի՝ տարրական մասնիկների հանելուկային աշխարհի հետազոտմանը, առանց որի աշխատանքների ԽՍՀՄ-ը դժվար թե դառնար միջուկային տեղաբաշխման: Նրա սիրած գործը ձեռքից խլել են այն ժամանակի երկիրը կառավարողները:

որ, որոնց վաստակը ԽՍՀՄ-ի առաջ հարյուրավոր անգամ քիչ էր Ալիխանյանի համեմատ:

Բայց՝ ամեն ինչ հերթով:

Դժվար է անվանել ֆիզիկայի մի բաժին, որը չի տարբերվում Ալիխանովից: Այդ տաղանդավոր ֆիզիկոսը հետազոտել է և՛ բյուրեղների կառուցվածքը, և՛ ռենտգենյան ճառագայթները, հետաքրքրվում էր և՛ կենսաֆիզիկայի հարցերով, և՛ հիվանդությունների, մասնավորապես՝ չարորակ ուռուցքների դեմ պայքարը ֆիզիկական մեթոդներով: Բայց նրա «չմուշկը» միջուկային ֆիզիկան էր: Եվ ահա, երբ պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում որոշում ընդունվեց Կուրչատովի ղեկավարությամբ ատոմային ռումբ ստեղծելու մասին, Ալիխանովը այդ նախագծում ներգրավվեց հենց սկզբից: Նրա ղեկավարությամբ 1945թ. ստեղծվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի N3 լաբորատորիան, որը հետագայում վերածվեց ՏՓՖ ինստիտուտի: Ալիխանովի աշխատակիցները պետք է զբաղվեին ծանր ջրում ռեակտորների մշակմամբ և միջուկային ֆիզիկայի բնագավառի հետազոտություններով: Աշխատանքները ընթանում էին հաջող, արդեն 1947թ. պատրաստ էր առաջին ռեակտորի նախագիծը, 1948թ. այն կառուցվեց, իսկ մեկ տարի անց շահագործման հանձնվեց: Արժե՝ ասել, որ առանց նման տեղակայանքի ԽՍՀՄ-ում միջուկային նախագիծը չէր իրագործվի:

Սակայն որպես իսկական գիտնական՝ Ալիխանովը հասկանում էր, որ իր ինստիտուտին անհրաժեշտ են հետազոտող-տեսաբաններ, քանի որ նրանց հաշվարկներն են ճանապարհ օգնում փորձարկողներին: Դրա համար էլ լաբորատորիայում հայտնվեցին երեք մեծ խմբեր՝ տեսաբանական, փորձարարական, ինժեներական: Որպեսզի ստեղծի առաջինը, Ալիխանովը իրավիճակը բազմաթիվ տաղանդավոր գիտնականների, ինչպիսին են Ի. Յ. Պոմերանցովը, Լ. Գ. Լանդաուն: Բացի դրանից, Ալիխանովը իր ինստիտուտին կից ձևավորեց ընդարձակ ինժեներական ստորակոնստրուկտային խումբ, որպիսին մինչ այդ չի եղել Խորհրդային ոչ մի գիտահետազոտական ինստիտուտում:

Հավաքելով հոյակապ թիմ՝ նա ձեռնամուխ եղավ իր վաղեմի երազների իրագործմանը: 50-ական թթ. ինստիտուտի կոլեկտիվը ձեռնամուխ եղավ բարձր էներգիայի պրոտոնների արագացուցչի կառուցման նախագծին, այսպես կոչված, կոշտ ֆոնոնիկայանց, որպիսին ԽՍՀՄ-ում դեռ չկար: Նման

տեղակայանքների առավելությունն այն էր, որ նրանցում խրճիկի անկյունագիծը սրընթաց փոքրանում էր, հետևաբար՝ վակուումային խցիկների չափերը, մագնիսների չափերը նույնպես փոքր էին, քան ավանդական կոլայդերներում: Դրանից հետևում էր, որ պետք է լինի երկու արագացուցիչ՝ փոքր և մեծ: Առաջինը ենթադրվում էր կառավարել ՏՓՖԻ-ի տարածքում, և նրա պրոտոնների արագացման էներգիան պետք է հասնի 7 ԳԷՎ-ի(գիգաէլեկտրոնվոլտ): Այն պլանավորվում էր որպես մեծ արագացուցչի գործող մոդել, որը կառուցեցին Պրոտվինա քաղաքում՝ Սերպուխովի մերձակայքում: Գիտնականների հաշվարկներով՝ պրոտվինյան «հսկան» պետք է դառնար աշխարհում նման տիպի ամենահզոր արագացուցիչը. պրոտոնների թափի էներգիան նրանում պետք է հասներ 70 ԳԷՎ-ի:

Հաշվարկները և փոքր արագացուցչի նախագծման աշխատանքները ղեկավարում էր ՏՓՖԻ-ի տնօրեն Վ. Վ. Վլադիմիրսկին, այն շահագործվեց 1961թ.: Արդեն նրա առաջին թողարկումները այնպիսի տպավորիչ արդյունքներ տվեցին, որ Ալիխանովը ինստիտուտի գործունեությունն ուղղեց տարրական մասնիկների հետազոտմանը: Բացի դրանից, Ալիխանովը ինքն էլ մասնակցեց ՏՓՖԻ-ի արագացման աշխատանքներին և անհամբեր սպասում էր, թե երբ վերջապես կավարտվի մեծ արագացուցչի շինարարությունը:

Եվ ահա, երբ աշխատանքները ավարտին մոտ էին, իսկ ինստիտուտի հետագա զարգացումը, պարզվում է, կապված էր աշխարհում խոշորագույն արագացուցչի օգտագործման հետ, միջին մեքենաշինության նախարարության (որին ենթարկվում էին «միջուկային» բոլոր ինստիտուտները) կուսակցական չինովնիկները դավաճանական հարված հասցրին ՏՓՖԻ-ին և նրա տնօրենին: Անավարտ արագացուցիչը ՏՓՖԻ-ից վերցրին և տվին մեկ ուրիշ հիմնարկի: Ալիխանովը փորձեց բողոքել, սակայն հաջողության չհասավ:

Ինչու՞ ՏՓՖԻ-ից, որը ղեկավարում էր ԽՍՀՄ միջուկային ֆիզիկայի հեղինակներից մեկը, վերցրին արագացուցիչը: Կուսակցական «ապարատիկները» դա բացատրեցին նրանով, որ Ալիխանովը անկուսակցական էր, իսկ ստրատեգիական նշանակության օբյեկտների ղեկավարները, իբր, պետք է կոմունիստներ լինեին: Սակայն այդ բացատրությունը բացահայտ անհիմն էր, քանի որ մի քանի տարի դրանից առաջ ոչինչ չէր խանգարել անկուսակցական Ալիխանյանին վաստակելու միջուկային զենքի ստեղծումը: Դատելով ամեն ինչից՝ դա պարզապես վրեժխնդրություն էր: Կուսակցական ղեկավարները չեն ներել Ալիխանովին, որ նա խղճի հետ գործարքի չի մտել: 40-50-ական թթ. սկզբներին, կոսմոպոլիտների և «բժիշկ-վնասարար»-ների դեմ պայքարի ժամանակ N3 լաբորատորիայից չի հեռացվեց և ոչ մի հրեա, չնայած մյուս ինստիտուտները ազատվեցին նրանցից, որոնց նախապայերից կամ նախատեսերից որևէ մեկը պատկանել է այդ ազգին: Ալիխանովը ոչ միայն փրկեց իր գիտաշխատողներին, այլև բռնաարքերի ենթարկված մյուս

գիտնականների համար երաշխավոր կանգնեց: 1952թ. նրա դեմ նույնիսկ գործ հարուցեցին, սակայն փրկեց Ստալինի մահը:

Ավելի ուշ, երբ ԽՍՀՄ-ում ստեղծվեց ջրածնային ռումբ, Ալիխանովը, ԽՍՀՄ միջուկային նախագծի մյուս գիտնականների՝ Կուրչատովի, Ալեքսանդրովի, Վինոգրադովի հետ նամակ գրեց կուսակցական ղեկավարությանը, որում ասվում էր, որ սուպերգեներատորումից հետո համաշխարհային պատերազմ սկսելը դառնում է անհնար, քանի որ այն կբերեր մարդկության ոչնչացմանը, այդ պատճառով էլ անհրաժեշտ է միջազգային նոր քաղաքականություն: Այդ ողջախոհ և կշռադատված ուղերձը դաժան քննարկումներ առաջացրեց ԽՍՀՄ վերին էշելոններում, քանի որ դրան աջակցում էին Խրուշչովի հակառակորդները: Նիկիտա Սերգեևիչը նրանց հեռացրեց իշխանություններից, բայց չմոռացավ ակադեմիկոսի նամակը:

ԽՍՀՄ-ում հիշեցին, որ տարիներ շարունակ Ալիխանովը անում էր ամեն հնարավորը, որպեսզի ինքնահեռանա ավելի ուժեղ ռումբի աշխատանքներից, որը Արգանսում հաշվարկում էր ակադեմիկոս Չելդրովիչի խումբը: Եվ նաև այն, որ երբ պարզ դարձավ, որ մտահղացումը չի իրագործվել, այդ «անհարմար» ակադեմիկոսը բացասական հաշվետվություն գրեց այդ աշխատանքի մասին:

Եվ վերջապես, կուսակցական ղեկավարներից ոչ մեկը չէր մոռացել, որ ԽՍՀՄ 20-րդ համագումարում Խրուշչովի զեկուցման քննարկման ժամանակ ՏՓՖԻ-ում այնպիսի բան կատարվեց, որ իշխանությունները որակեցին որպես հակապետական: Ինստիտուտի կուսակցական բջիցի նիստում գիտնականները, փոխանակ առանց մտածելու հավանություն տալին զեկուցմանը, սկսեցին վերլուծել երկրում ստեղծված իրավիճակը և «ղեղատոններ» առաջարկել պետությունը նորացնելու: Օրինակ՝ ֆիզտեխնիկականի շրջանավարտ Ռոբերտ Ավալովը առաջարկեց բնակչությանը իրավունք տալ զենք կրելու, որպեսզի ժողովուրդը կարողանա պաշտպանվել բյուրոկրատիայի և հատուկ ծառայությունների տեռորից: Ինստիտուտի աշխատակից Յուրի Օռլովը(հետագայում հայտնի այլախոհ) առաջարկեց «սոցիալիզմի հեծքի վրա ժողովրդավարություն կառուցել»: Կրտսեր գիտաշխատող Սմոլյանկին բարձրաձայնեց, որ ԽՍՀՄ-ի անդամագրվելը դարձել է շատերի համար կարիերայի գործիք: Տեխնիկ Շչեդրինը կոչ արեց թույլ չտալ Խրուշչովի անձի պաշտամունքը: Իսկ ֆիզիկոս-փորձարար Վադիմ Նեստերովը ապացուցեց, որ անհարժեշտ են տնտեսական ռեֆորմներ:

Հետաքրքիր է, որ անգամ այն բանից հետո, երբ քննարկումների ժամանակ նախարարության քաղաքական համակարգող Մեգենցկը պահանջեց դադարեցնել «հակասովետական» քննարկումը, կուսակցական բյուրոն չկարողացավ ընդունել որոշում. «խռովարարներ» ձայնը չի բերեց: Բոլորը սպասում էին, որ նրանց, ովքեր ելույթ են ունեցել ժողովում, կծերբակալեն, բայց Ալիխանովը դա թույլ չտվեց: Նա զանգեց Խրուշչովին և բացատրեց իրավիճակը: Արդյունքում ըն-

դունվեց կոմպրոմիսային որոշում՝ «խռովարարներին» ազատեցին(ի դեպ, Ալիխանովը նրանցից յուրաքանչյուրին օգնեց աշխատանքի տեղավորվել), իսկ գործը կասեցրին: Սակայն այդ ժամանակվանից ՏՓՖԻ-ն կուսակցական չինովնիկների աջքուն հակասովետական, իսկ նրա տնօրենը՝ քաղաքական անհուսալի տարր էր:

Ավելի հավանական է, որ հենց այդ պատճառով Ալիխանովին թույլ չտվեցին իրականացնել իր երազանքը. նրան պատժեցին՝ չհնազանդվելու համար: Եվ դա հանգեցրեց նրան, որ նա կաթված ստացավ: Չնայած նա ուշքի եկավ, սակայն ինստիտուտը ղեկավարել այլևս չէր կարող, և 1968թ. ազատվեց ինստիտուտի տնօրենի պաշտոնից: Իսկ երկու տարի անց տաղանդավոր գիտնականը վախճանվեց: Նա ընդամենը 66 տարեկան էր:

Բայց ինչու՞ Ալիխանովը այդքան հիվանդագին ընդունեց ուրիշ հիմնարկ արագացուցչի փոխարինման փաստը: Մի՞թե նա և իր աշխատողները չէին կարող համատեղ ծրագրերի շրջանակում աշխատել: Ավա՛ղ, այն ժամանակ դա գործնականում հնարավոր չէր. «միջուկային» թեմատիկան համարվում էր հույժ գաղտնի և անգամ որպեսզի մի ինստիտուտի աշխատակիցը ընկնի մյուս ինստիտուտի տարածք, հարկավոր էին բազմաթիվ թույլտվություններ և համաձայնություններ, ինչի համար ամիսներ էին հարկվում:

Եվ այսպես, երազանքը իրագործելու հնարավորության կորուստը հանգեցրեց տաղանդավոր գիտնականի վաղաժամ մահվան, ում երկիրը պարտական է միջուկային տերություն կարգավիճակ ունեցալու համար:

Այդ ժամանակվանից անցել են շատ տարիներ, և ավա՛ղ, մենք չենք կարող պարծենալ, որ պահպանել ենք մեծ ակադեմիկոսի ժառանգությունը: ՏՓՖԻ-ում փոքր արագացուցիչը հրդեհից տուժել է 2012թ. գարնանը, մինչև հիմա չի վերանորոգվել: Պրոտվինայում պրոտոնների արագացուցիչը ի վիճակի է աշխատել, սակայն 90-ական թթ. այն մի քանի անգամ կանգնեցրել են, այժմ էլ նրա վիճակը, փորձագետների կարծիքով, լավագույն լինելու ցանկություն է թողնում:

Սակայն առավել տխուրն այն է, որ «Կուրչատովյան ինստիտուտ» գիտահետազոտական կենտրոնը, որն այս տարի հանձնվեց ՏՓՖԻ-ին, պատերազմ է մղում ակադեմիկոսի անվան համար: Վերջերս առաջարկված նոր կանոնադրությունում այն կոչվում է պարզապես Տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտ, թեպետ 70-ական թթ. կրում էր Ա. Ի. Ալիխանովի անունը: Չնայած աշխատակիցների բողոքներին՝ տաղանդավոր գիտնականի ազգանունը այդպես էլ չի վերադարձվել հիմնական պաշտոնական անվանմանը: Ինչու՞ է «Կուրչատովի ինստիտուտի» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարությունը հայտարարել հետմահու պատերազմ Ալիխանովի դեմ՝ անհասկանալի է: 2Է՞ որ Ալիխանովը և Կուրչատովը եղել են ոչ միայն միջուկային նախագծի գործընկերներ, այլև մտքի ընկերներ...

ՆԵՏԱԳԻՑ

4 միապետության, իսկ նրա հակառակորդներն ուզում են պահպանել Հոռոմի վաղեմի կարգը: Կեսարը հաղթում է Պոմպեոսին, հետո Կեսարն է կործանվում, այնուհետև Կեսարին սպանողներ Բրուտոսն ու Կասիոսն են կործանվում: Բրուտոսի դագաղի մոտ Անտոնիոսը և Օգոստավիանոսն ափսոսանք են նմանում: 3. Կեսարը իր առանձնասենյակից նույնիսկ չէր հանել իր հակառակորդ Պոմպեոսի կիսանդրին, և երբ նրան սպանեցին, արձանն ընկավ հատակին: Այդ մարդկանց պայքարից և կործանումից առաջ է գալիս միասնություն և նոր կյանք:

Թե՛ ողբերգական և թե՛ կատակերգական նկարագրությունների ընթացքում ուսուցիչը պետք է ճիշտ օգտագործի պատմական հանրահայտ անձնավորությունների գնահատականները: Ասենք, Յան-Յուսի ողբերգական վախճանի մասին Մարքսի այն ասույթը, որով Հուսի խարույկի վրա այրելու մեղքը բացատրվում է գերմանական բազալոր Սիզիգմունդի արարողով: Նա ասել է. «Գործի ելքը որոշեց կայսր Սիզիգմունդը, այդ անբանն ու ծուլը, հարբեցողն ու կնամուլը, այդ վախկոտն ու անամոթը, այդ կամակորն ու խելքամաղը»:

Պատմության դասերի ընթացքում զգալի միջոց են արվեստը և այն ցուցարող նկարները: Մշակույթի մի մեծ թանկը կազմող արվեստի հուշարձաններին նվիրված դասերի ընթացքում բացահայտվում են նկարագրված երևույթի կամ առարկայի գեղարվեստական էությունը, տրվում է պատմական անձի կամ հասարակական գործունեության գնահատականը: Առանձին պատմական նկարների ցուցադրման միջոցով ուսուցիչը կարող է ցույց տալ, թե ինչպես է արվեստի տվյալ ստեղծագործությունը բացահայտվում, ասենք՝ գավթոդակայն պատերազմի բնույթը (Ֆ. Գոյայի «Պատերազմի հասցրած վնասները», Պիկասոյի «Հերոսիկա»-ն և այլն): Կան նկարներ, որոնցում պատկերված են հարուստ և աղքատ մարդկանց այն դիրքորոշումները, ըստ որի՝ աղքատն ասում է. «Ի՞նչ սարսափելի բան է պատերազմը, իսկ հարուստը թե՛ «Սարսափելի շահավետ բան է պատերազմը»:

Արվեստը կարող է առավել արդյունավետ գործել պատմության ուսուցման գործում այն դեպքում, եթե ուսուցիչը աշակերտների առաջ բացի տվյալ արվեստի մուշտիկ պատմագրությունը, դասակարգային բնույթը, արվեստի ժողովրդականությունը, մարդկությանը բերած նրա նշանակությունը և ցույց տա նրա հասարակական դերը լուսավորչական, դաստիարակչական և գեղագիտական տեսանկյունից:

Գեղագիտական դաստիարակչությունը անմիջական կապ ունի գեղարվեստական դաստիարակչության հետ, բայց չի փոխարինում նրան:

Գեղարվեստական ցիկլի առարկաների (երգ, երաժշտություն, նկարչություն, գրականություն) խնդիրն է գեղարվեստական լեզվով աշակերտներին ծանոթացնել արվեստի ստեղծագործության միջոցների տարբեր տեսակներին: Պատմության դասերին այդ գիտելիքները սովորողներին հաղորդվում են միջառարկայական կապի միջոցով՝ ուսումնասիրվող նյութի բովանդակությունը առավել լրիվ և խորը բացահայտելու համար, հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրության առումով:

Միջնակարգ դպրոցի առանձին դասարաններում դասավանդվող պատմության դասընթացներում տարբեր ձևով ու չափով են նկարագրվում արվեստի առանձին բնագավառներ: Ասենք՝ 5-րդ դասարանի «Հին աշխարհի պատմության» դասերին աշակերտներն առաջին անգամ են հանդիպում ստրկատիրական հասարակարգի արվեստի հետ, որում վառ են արտահայտված տիրապետող դասակարգի գեղագիտական գաղափարները: Այսպես, «Պետության կազմավորումը Հին Եգիպտոսում» դասին, պատմելով երկրի միավորման մասին, ուսուցիչը, կոնկրետացնելով իր ասածը, աշակերտներին ցուցադրում է Նարմեր փարավոնի ժամանակի այն հուշարձան-

նիկները, որոնցում պարզ երևում են հաղթող փարավոնների դիմանկարները: Ուսուցիչը աշակերտներին հարցնում է. «Կարո՞ղ է փարավոնը մի քանի անգամ մեծ լինել, քան մյուս մարդիկ»: Աշակերտները, որոնք նախապես ուսուցիչը լսել են այդ հարցի շուրջը ծավալված բացատրությունները, պատասխանում են. «Ոչ, հին եգիպտացիները այդպես պատկերելով փարավոնին՝ ցանկացել են ցույց տալ մեծ ուժը, հզորությունը և հարստությունը»: Ի դեպ, այստեղ արժե զուգահեռաբար խոսել Արցախի աշխարհի հաշտության հարցի վրա: Նույն «Հին Եգիպտոսի արվեստը» դասին աստվածների, մեծերի և հասարակ մարդկանց գերեզմանների առանձնահատկությունները պետք է ընդհանրացվեն որպես մեկ միասնական արվեստի դասակարգային մոտիվներ: Այստեղ էլ ուսուցիչը զուգահեռաբար կարող է օրինակ բերել Արցախում հայտնաբերված դամբանաբլուրների 3 կարգի թաղումները, որոնք վերաբերվել են մ. թ. ա. 13-9-րդ դդ., մեկուս՝ միայնակ դիակ, 2-րդում՝ դիակիզման վիճակ, 3-րդում՝ քարե արկղի մեջ թաղված մարդ, իսկ կողքին՝ մի քանի սպասավորների դիակներ, ու նշվի, որ ինչպես հին աշխարհի ստրկատիրական շատ երկրներում, այնպես էլ Արցախում մեծահարուստները մահվանից հետո էլ ցանկացել են շահագործել հասարակ մարդկանց: Հենց այդպես է բացատրվում հին աշխարհի արվեստի դասակարգային բնույթը:

Քիչ հեռանալով Հին Արևելքի արվեստից՝ ուսուցիչը աշակերտների մեջ գեղագիտական ճաշակ է պատվաստում հունական կլասիկների արվեստի մեջ ներառված օրինակներով, որտեղ առաջին անգամ «Հունական քաղաքային տություն» թեմայի մեջ օգտագործվում է «դեմոկրատիա» բառը, տվյալ դեպքում՝ «ստրկատիրական դեմոկրատիա» անվան մեջ: Հենց այս առումով է, որ գիտնական Կ. Մարքսի ասելով՝ «Մարդկության մանկությունը» այստեղ է, որ ճաշակել է ու գեղեցկացել է առաջին անգամ ծնել աշխարհում առաջին ձգտումը՝ դաստիարակելու բազմակողմանի ներդրման կարգաձևն անհատ: Պատմության դասերում աշակերտներին ծանոթացնելով հին հույների ստեղծագործական արվեստին՝ ուսուցիչը նրանց սովորեցնում է, թե ինչպես էին հույները պատկերում իրենց հերոսներին և աստվածներին, ինչպես՝ օլիմպիականներին, քաղաքական գործիչներին, ռազմապետներին՝ ուժեղ, գեղեցիկ, համարձակ: Հույական ու մեծադիրներ Ջաքը և Պերիկլեսը, գործերը Հերոսուկեսը և Լեոնիդասը, իմաստուն Դեմոկրիտը, հայրենասեր Դեմոսթենեսը հինգերորդից աշակերտների աչքի առաջ երևում են առավել ազդեցիկ անձնավորություններ: Այդ հոյակերտ արձանների ցուցադրումը նրանց բերում է այն համոզման, որ աշխարհում մեծերի և ուժեղների շատ օրինակներ կան, բայց մարդու ուժեղ ոչինչ չկա, որը հասկացրել են հին հույները, և այդքան ուժեղ ու հզոր պատկերել մարդուն:

«Հելլենական մշակույթը» թեմայի ուսուցման ընթացքում ուսուցիչը, ցուցադրելով մի շարք նկարներ, աշակերտներին հարցնում է. «Ո՞ւմ և ինչպե՞ս են նկարագրել հին հույները», աշակերտները պատասխանում են՝ «Հույները նկարագրել են հերոսներին, աստվածներին, հայրենասերներին», իմանում են, որ «հույները այդ մեծարված մարդկանց արձանները դրել են վաճառքում, փողոցներում, հրապարակներում», նրանք եզրակացնում են՝ «Արվեստը փառաբանել է ուժեղներին, համարձակներին, գեղեցիկ մարդկանց, որոնք իրենց հայրենիքին փառք են բերել», իհարկե, իրենք էլ կծղտեն նմանվել նրանց: Այստեղից եզրակացվում է, որ արվեստը ունի քարոզչական ու դաստիարակչական ուժ: Պատմության ուսուցիչը, 6-րդից աշակերտներին հետ ուսումնասիրելով Վերածննդի շրջանի ստեղծագործությունները, որոնք ստեղծվել են պատմա-

կան տարբեր ժամանակներում, հասկացնում է սովորողներին, որ ի տարբերություն Հին Արևելքի երկրների արվեստի մոտիվների՝ միջնադարում առավելապես նկարվել կամ քանդակվել են մարդիկ, որոնք մի գլուխ բարձր են հեթանոսական արվեստից:

Աշակերտների զարմանքը կշարժի, երբ իմանան, որ Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա Ջիոկոնդոն» կնոջ նկարը մասնագետները դիտարկել են 50 կողմերից (աչքերի փայլը, նայվածքը, սանրվածքը, հարդարանքը, հագուստի տեսակը, մարմնի կառուցվածքը՝ գլուխը, վիզը, կոկորդը, կուրծքը և այլն) «Տեսնելով Միքելանջելոյի «Պավիթը»՝ նրանք կհիանան նրա ֆիզիկական հզորությանը, կատարածներով, բայց և՛ թախիծով կլցվեն նրա ողբերգական վիճակի նկատմամբ, որը, իհարկե, մեծահարուստ-ստրկատեր Մեդիչինի շահագործման արդյունք է:

Սովորողներին ծանոթացնելով Վերածննդի ժամանակաշրջանի նկարիչ Ռաֆայելի ստեղծագործություններին՝ կարելի է դրանք համեմատել Լեոնարդոյի «Ջիոկոնդոն»-ի հետ և եզրակացնել, որ եթե «Մարոնայի» հայացքի մեջ կա ուրախություն, բավականություն, վստահություն, իսկ Ռաֆայելի «Միքելանջոյան տիրամայրը» նկարի մեջ նկատելի են մոր տանջանքները, որ հասցրել են նրա ամենաթանկագին՝ երեխաների զոհությանը, և բարձրացնում ու հերոսականը նրա արարքի մեջ:

Ուսուցիչը դպրոցականներին ցույց է տալիս մարդու ներաշխարհը շեքսպիրյան ստեղծագործությունների պիղծանյութ: Սովորողներին պետք է հայտնի լինի, որ ֆեոդալական կարգերը և աշխարհայացքը իրենց ցուցադրում են նաև կատակերգության մեջ: Դա կարելի է ցույց տալ Ֆ. Մարքեի «Պարզանայան» և Պանտագրուելի՝ ստեղծագործության օրինակի վրա, որտեղ ժխտելով հինը՝ մեծ ծաղրանկարիչը հաստատում է առաջադիմական գաղափարները, այդ թվում՝ կազմակերպչական:

Հասարակության կողմից գեղագիտության յուրացման և տարածման իրական ժամանակաշրջան էր 19-րդ դարը՝ իր դեմոկրատական հեղափոխական հոսանքների զարգացման պայմաններում: Այն բացահայտվում է հատկապես «Կուլտուրան 19-րդ դարի 60-90-ական թվականներին» թեմայի ուսումնասիրության դասին:


«Հայ ժողովրդի առումով գեղագիտական հարուստ նյութ կա «Հայ ժողովրդի մշակույթը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայի մեջ, որտեղ Ա. Շիրվանզադեի դրամաները, Հակոբ Պարոնյանի, Գր. Ջիրարայի ծաղրական ստեղծագործությունները առատ նյութ են պատմության դասերը համեմելու համար:

Հայ ժողովրդի հին շրջանի պատմության մեջ գեղագիտական տեսակետից էլ օրինակները շատ են և պետք է դրանք օգտագործվեն պատմության դասընթացում: Այսպես, եգիպտական բուրգերի մասին խոսելիս ուսուցիչը կարող է օգտագործել հայկական մշակույթի անդամների այն կոթողները, որոնք եղել են նախաքրիստոնեական շրջանում: Մյուսպիսի մի մեծ շրջան է Արևմտյան Տավրոսի Նեմրութ լեռան շուրջը վեր հանած այն կոթողների խմբաբանակը, որոնք մ. թ. ա. 2-րդ հազարամյակի մոտիվներ են: Երվանդյան ժամանակի Կոմագենեի թագավորությունում (Սամոսատում) Երվանդյան-Անտիոքս թագավորի ժամանակ վեր խոյացած հեթանոս հինգ աստվածների (Արամազդ, Տիր, Միհր, Անահիտ, Վահագն) կոնաձև արձանների քանդակները շլացուցիչ օրինակ են հին հայերի բարձրագույն մշակույթի: Եվ զուր չէ, որ 1890թ. այս տարածքները ուսումնասիրած արտասահմանցի հնեագետները այն անվանել են հին աշխարհի 8-րդ հրաշալիք: Նույնը և կարելի է տեսնել Արցախի Տիգրանավերտի օրինակի մեջ, որ հայ հնեագետների կողմից ուսումնասիրվում է և ներկայացվում նոր սերնդին:

Միջալե ԲԵԳԱՐՅԱՆ

Խոսք հիշատակի

ԱՐՁԱՆՈՒՆԵՐԸ ԳԵՆ ՄՈՒՆՆԱ ԶԵՂ...



Խոր վշտով տեղեկացանք, որ մահացել է ԵԿՄ վարչության անդամ Հակոբ Հակոբյանը: Նա, որին պարոն Հակոբ էինք ասում «Պատանի երկրապահներ» ակումբի ժամբարում, որին, ինչպես հայտնի է, այս տարի մասնակցեցին նաև երեխաներ Արցախից: Չեմ կապ էր ստեղծվել նրա և արցախցիների միջև: Իսկ «Լուսարարի» և նրա՝ որպես «Երկրապահ» թերթի խմբագրի և սցենարիստի, ստեղծագործական պայմանավորվածություններ ձեռք բերվել: Ճամբարի մասին մեր կողմից տպագրված հոդվածներով թերթերը պետք է ուղարկելինք ԵԿՄ վարչություն:

Ճամբարում վետերան-ագատամարտիկների էին գտնվում, բոլորի մասին տեղեկատվություն էր տալիս և խորհուրդ տալիս գրուցել նրանց հետ, անպայման մի հետաքրքիր նյութ կստացվի: Իսկ իր մասին լուր էր: Վերջում իմացանք, որ գրքերի հեղինակ է, բանաստեղծությունների ժողովածու ունի, Ճամբարի գրադարանում կային նրա գրքերից, իր մակագրությամբ նվիրեց ոմանց: Անտիպ գիրք ունի սպարապետ Վազգեն Սարգսյանի մասին, պայմանավորվեցինք, որ էլեկտրոնային փոստով կուղարկի և հատվածաբար կտպագրենք «Լուսարար»-ում:

Մեր վերադառնալուց մի քանի օր հետո ինքը պետք է գար Արցախ, նոր նախաձեռնություն է սկսել՝ Ջուղայի խաչքարերի կրկնօրհանները են որոշել տեղադրել Հայաստանով մեկ, այդ թվում՝ Արցախում: Չանգեց, որ շուտով այստեղ կլինի, և կհանդիպենք: Ի դեպ, բոլորի հետ: Երեխաների հեռախոսահամարները վերցրել էր և գանգում էր նրանց: Երբ սպասված ժամանակին լուր չտվեց, անհանգստացանք: Պարզվեց՝ եկել էր Շահումյան, վատ զգալու պատճառով չէր շարունակել ճամապարհը, վերադարձել էր ճամբար, բայց այնտեղ զգացողությունը վատացել է և տեղափոխել են հիվանդանոց: Ամեն օր դարաբարեցի երեխաները զանգում էին նրան, շատ ուրախանում էր այդ ուշադրությունից: Արդեն ապաքինվել էր, դուրս գրվել հիվանդանոցից և սպասում էինք խոստացած հանդիպմանը օգոստոսին. պիտի գար և ԵԿՄ նվերները հանձնել 1-ին դասարանցիներին, ինչպես ամեն տարի անում էր: Բայց լսեցինք բոթը...

ԵԿՄ մահախոսականում կարդում ենք տողեր, որոնց մասին մա չէր ասում.«1987թ. Ղարաբայան շարժման անդամ է եղել: 1988թ. զբաղվել է ինքնապաշտպանական խմբերի և ջոկատների կազմակերպման գործընթացով: Հակոբ Հակոբյանն աջակցել է ջոկատներին զենքով ապահովելու խնդիրներին:1989թ. Էջմիածնի «Երկրապահ» կամավորականների ջոկատի կազմում մասնակցել է ԼՂՀ Հաղորդի տարածքի Մելիքաշեն, Բլուրան, Խրմնջուղ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

1989թ. դեկտեմբերի 31-ից մինչև 1990թ. ապրիլի 20-ը մասնակցել է ԼՂՀ Հաղորդի տարածքի Հողեր, Տուսի, Մեծ Թաղեր և Տող գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

1990թ. ապրիլի 21-ից մինչև ապրիլի 26-ը մասնակցել է ԼՂՀ Հաղորդի տարածքի Մարիամաձոր, Դրախտիկ, Ազոխ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

1991թ. հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 20-ը մասնակցել է «Կոլցո» օպերացիայի դեմ Մարտակերտի շրջանի Հաթերք, Թալիշ, Մեծ Ծեմ, Վաղուհաս գյուղերում մղվող մարտերին:

1992թ. փետրվարին ակտիվորեն մասնակցել է Ազգային բանակի կազմավորման գործընթացին եւ Շուշիի ազատագրման օպերացիայի մշակմանը...2000թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԵԿՄ վարչությունում՝ որպես գաղափարախոսության և քարոզչության բաժնի պետ»:

«Հակոբյանը կյանքն ապրեց երկրապահավարի, անմնացողը նվիրումով: Մինչև արարած վերջին օրն էլ ազնվորեն ծառայեց հայրենիքին, ժողովրդին: Նրա ուներին չափազանց բարդ աշխատանք էր ծանրացած «Երկրապահում»՝ գաղափարաքարոզչական աշխատանքից մինչև արխիվային, մինչև ԵԿՄ վարչությունում եւ ստորաբաժանումներում գրադարանների հիմնում: Սակայն, մա այս ամենն անում էր առանց տրտմալու, անում էր հաճույքով՝ ազգ-հայրենիքին պիտանի լինելու գիտակցումով:

Հակոբյանն Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից եղել է այդ գործի նվիրյալ ու մինչ արարած վերջին օրն էլ պայքարում էր հանուն հայրության արդար դատի հարթանակի: Նա դեռ լրջագույն ծրագրեր ուներ, ձեռնարկներ, որոնք ավարտին հասցնելն իր ընկերների, գործընկերների, երկրապահների պատվի գործը պետք է լինի»,-կարդում ենք ԵԿՄ նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի ցավակցական հեռագրում:

Դուք միշտ կլինեք արցախցիների հիշողության մեջ, պարոն Հակոբ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՇՐՋԱՆԱԿԱՐՏ

ՀԱՆՌԻՊՈՒՄ ԿԵՆ ԴԱՐ ԱՆՑ

Վերջերս հարազատ կրթությամբ էին այցելել Աշանի միջնակարգ դպրոցի 1964-65 ուստարվա շրջանավարտները՝ նշելու դպրոցն ավարտելու 50-ամյակը: Նրանցից մեկն էլ գրող, Արցախյան շարժման առաջամարտիկ, «Լուսարար» թերթի նախկին խմբագիր Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ է:

Դպրոցն ավարտել ենք 14 հոգով, յոթը տեղացիներ էին, մեկը՝ Եմիշանցի, վեցը՝ Նորշենից (վերջինիս դպրոցը դեռևս ութամյա էր), և շատերս տասնամյակներ ի վեր չէինք տեսել միմյանց: Ցավոք, դասարանը հանդիպմանը ներկայացել էր ոչ լրիվ կազմով: Կյանքից վաղաժամ հեռացել են մեր չորս տղաները՝ Սլավիկ Միրզոյանը, Դավիթ Օհանյանը, Գամիկ Գրիգորյանը և Լևոն Ղայանյանը: Միսիթարական է մի բան՝ նրանք լավ ընկերներ էին ու բոլորիս մոտ միայն բարի հիշողություններ են թողել:

Կոմիտաս Արսենի, մի քանի խոսք Ձեր դպրոցի, Ձեզ դասավանդած ուսուցիչների մասին:

Այդ տարիներին Աշանի միջնակարգը Լեռնային Դարաբաղի (և ինչո՞ւ միայն) առաջատար դպրոցներից մեկն էր համարվում շնորհիվ իր հմուտ, համերաշխ ուսուցչական կոլեկտիվի: Հիշեցնեն, որ Արցախի 100 լավագույն մանկավարժներից երկուսը աշանցիներ էին՝ հայ գրականության շնորհաշատ մասնագետներ, գրողներ Վարդան Բալայանը և Լևոն Հարությունյանը: Սիրված ուսուցիչներ էին Հակոբ Չուսեփյանը (մաթեմատիկա), Միքայել Խաչատրյանը (պատմություն), Իրինա Գրիգորյանը (քիմիա), Օֆելյա Օհանյանը (ֆիզիկա): Ցավալի է, որ նրանց մասին խոսում են անցյալ ժամանակով:

Կկամենայի կրկին անդրադառնալ երջանակահիշատակ Վարդան Բալայանին, Բագրատ Ուլուբաբյանի բնութագրմամբ՝ «այդ բազմահմուտ դեկավարին ու հոգատար ընկերոջը, այդ մեղվաջան աշխատողին ու պայծառ մարդուն», ով անվիճելի հեղինակություն էր ոչ միայն իր գործընկերների և աշակերտների համար:

1945թ., պատերազմից վերադառնալով, նա ստանձնել է Աշանի դպրոցի տնօրենի պարտականությունները՝ իրեն ցմրոր նվիրելով մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության սուրբ գործին: Այդպես՝ երկու տասնամյակ: Երբ Աշանի քիկուճի սարը ճեղք էր տվել, և անհրաժեշտ էր գյուղը տեղափոխել, վաչկիցս, ինչպես Բ. Ուլուբաբյանն է վկայում, խոսքերը մեկ արհն, թե՛ այսպիսի պայմաններում մեր կոլտնտեսության դեկավարը կարող է լինել միայն ընկեր Վարդանը: Նա չնեղվեց համապիտանների խնդրանքը, գյուղը տեղափոխեց, բարի շատ գործեր կատարեց, բայց... անմիտ մի պատահար վերջակետ դրեց 47-ամյա գործչի կյանքի հայրենամավեր պատմությանը:

Միանգամայն արդարացի կլիներ, չէ՞, եթե Աշանի դպրոցն այսօր կոչվեր Վարդան Բալայանի անունով, ով ծանրակշիռ ծառայություններ է մատուցել թե՛ դպրոցին ու թե՛ գյուղին, անհերքելի ներդրում ունեցել Արցախի կրթամշակութային ոլորտում: Սակայն պարզվում է, ինչքան էլ զարմանալի թվա, կարևորությունը տրվել է ոչ թե հեղինակությանը, այլ բարեգործությանը, ավելի ճիշտ՝ կարեկցանքին... Հավատանք, որ մի գեղեցիկ օր կտրվի այդ անարդարացի սխալը: Դա բնավ սոսկ իմ և իմ դարձակների կարծիքն ու ցանկությունը չէ, այլ բոլոր նրանց, ովքեր երջանկություն են ունեցել աշակերտելու Կ. Բալայանին կամ աշխատելու, թեկուզ առնչվելու նրա հետ: Ինչևէ:

Մենք մի հաճելի հուզմունքով հանդի-

պեցինք (չեն ուզում ասել՝ ծեր) թոշակառու ուսուցիչներ՝ 90-ամյա Գուրգեն Բալայանին և Թամարա Առստամյանին՝ աշանցի մեր ընկերների առաջին դասարանի ուսուցչուհուն, 85-ամյա Ռուբեն Պողոսյանին, հանրապետության վաստակավոր մանկավարժ, Արցախյան շարժման նվիրյալ էմիլ Բալայանին:

Դպրոցն այսօր համարված է երիտասարդ, կարող ուժերով և տնօրեն Միսիթար Շինդյանի հավաստմամբ՝ ձգտում են արժանավայել շարունակել իրենց ավագ գործընկերների լավագույն ավանդույթները,

ընդ: Մարտել Պողոսյանը՝ մեր կենսախիմո համադասարանցին, երկար տարիներ առաջատար մասնագետ էր Արարատի մարզի ֆինանսական մարմիններում և հանդիսանում է ՀԿԿ Մասիսի շրջկոմի առաջին քարտուղարը: Նրա ջանքերի շնորհիվ է, որ Ստեփան Շահումյանի հավատարիմ գինակից, աշանցի Լևոն Միրզոյանի «մոռացված» կիսանդրին վերագտել է իր պատվավոր տեղը հայրենի գյուղում:

Արցախի դեկավար աշխատողներից շատ քչերը կարող են իրենց երկարատև



բարձր պահել երբեմնի համբավավոր այդ կրթությանի անունը, ինչը չէր կարող չուրախացնել նախկին սաներիս:

Պարոն Դանիելյան, ուրիշ ի՞նչ հուզիչ կամ հաճելի պահեր եք ապրել այդ հանդիպման ընթացքում:

Կարելի է ասել՝ ողջ ընթացքն էր հուզումնալից, կարծես թե կրկին աշակերտ էինք դարձել և դպրոց էինք եկել անպատրաստ, առանց դասը սովորելու, թեև մեր ժամանակներում նման թերացումները շատ հազվադեպ էին լինում, եթե չասենք՝ բացառված էին: Թերևս կառանձնացնել այն պահերը, երբ թարմ մեխակներ էինք խոնարհում Արցախյան պատերազմում նահատակված աշանցիների և նորշենցիների շիրմաքարերին ու երբ նրանց վիշտակին մոմեր էինք վառում Նորշենի պերաբացված սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն (դժբախտաբար, սխալվոր պատերազմը չի շրջանցել և մեր որոշ համադասարանցիների ընտանիքները):

Հաճելի էր տեսնել Նորշենի նորակառույց դպրոցը, ճաշակով վերանորոգված մշակույթի տունը և հանդիսությունների սրահը, որոնք լրջորեն տուժել էին թշնամակաճ հեռահար հրետակոծությունների հետևանքով:

Եվ, վերջապես, չի կարելի չնշել մեր Մարտել ընկերոջ Հայկուհի թոռնուհու հրամցած անակնկալը. նա տարեց շրջանավարտներիս ողջունեց «չարենցյան» հեզաճկուն պարերով և ասես մի կարճ ժամանակով մեզ վերադարձրեց մեր ջանքերունը, աշակերտական երանելի տարիները, երբ այս ու այն առիթով գյուղական համեստ ակունքում համերգներ ու ներկայացումներ էինք տալիս, և մեզ ծափահարում էին ու մենք մեզ չափազանց շոյված էինք զգում...
- Իսկ այժմ հակիրճ ներկայացրեք, խնդրեմ, Ձեր դասարանցիներին:

Մարտտ Խաչատրյանի բազմանդամ ընտանիքը, առաջիններից մեկը մշտական բնակություն հաստատելով ազատագրված Քաշաթաղում, ինքնաբերական նվիրվածությամբ լծվեց այս շրջանի վերահայացման շնորհակալ գործին, և այժմ էլ իր լրջմիտ տիկնոջ հետ մեկտեղ նա շարունակում է կրթական-մանկավարժական գործունեությունը:

գործունեությամբ մրցակցել Սլավիկ Սեյրանյանի հետ, ով ավելի քան չորսուկես տասնամյակ պատասխանատու պաշտոններ է վարել Մարտունու շրջանում (հիմա էլ նույն գործին է), իսկ արցախա-արդբեջանական պատերազմի առաջին տարիներին լինելով առաջին պաշտոնատար անձը՝ իր լուսնան է ունեցել շրջանի պաշտպանական գործուն:

Անահիտ (դպրոցում՝ Գյուլչըրա) Աբալյանը Արցախի պետական համալսարանի հայ գրականության ճանաչված դասախոսներից է, բանասիրական գիտությունների թեկնածու, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ: Հեղինակ է գրականությանն ու մանկավարժությանն առնչվող մի քանի երկասիրության:

Օֆելյա Ասրյանը, երկար տարիներ աշխատելով Մարտունու շրջանային հիվանդանոցում, հոգատար բուժքրոջ համբավ է վաստակել:

Կյանքում պատվով են քննություն բռնել նաև եղվարդ Օհանյանը, էլմիրա Միրզոյանը, Ջոյա Սևունյանը, հարկավ, վերոնշյալ մեր չորս տղաները նույնպես՝ դրանով իսկ արդարացնելով հարատու դպրոցի, սիրելի ուսուցիչների վատահոլությունը, նրանց ակնկալիքները: Միով բանիվ՝ բոլորն էլ, ինչպես Մարտելը կասեր, արժանի են մեծաբանության, ու են ուրախ են, որ նրանց դասընկերն են եղել:

Սակայն ոչինչ չեն կարող ասել մեր մի այլ դասարանցու՝ Ջաֆարով Ռաֆիկի մասին: Դպրոցն ավարտելուց հետո մեզանից ոչ ոք չի հանդիպել, չի առնչվել նրա հետ:

Իսկ կցանկանայի՞ք, որ նա նույնպես ներկա լիներ Ձեր հորեյանական հանդիպմանը:

- Ինչո՞ւ ոչ...
- Ի՞նչ կկամենայիք ավելացնել ասվածին:

- Կուզեի համադասարանցիներիս անունից հրապարակավ երախտագիտություն հայտնել մեր բոլոր ուսուցիչներին, միաժամանակ ներողություն հայցել մեր երբեմնի պատանեկան չարածիությունների և խենթությունների համար, որոնցով ինչ-ինչ դաժնություն ենք պատճառել նրանց:

60 ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՐՉՈՒՆԵՔԻ



Հայ կին, հայ մանկավարժ... Շատ խորը և տարողունակ հասկացություններ են երկունսն էլ: Հայ կինն անպայման իրենում ներառում էր և է մանկավարժի կերպարը՝ կրթությունը պարտադիր զուգակցելով դ ա ս տ ի ա ր ա կ ո ղ ի կարևորագույն գործունեության հետ: Ասել է թե՛ մենք հայ կնոջ կերպարում ունեցած տարբեր պարտականությունների հետ և նրանցից առաջ

տեսնում ենք նշված երկու կարևոր գործառույթների իրականացումը: Ստեյլա Բալայանին իրավամբ կարելի է դասել հայ մոր ու դաստիարակողի կերպարի լավագույն դրսևորողների շարքում, մարդու, ով իր փխրուն ուսերին տարիներ շարունակ տարել է բավականին լուրջ ծանրություն, ով կարողացել է հաղթահարել կյանքի մատուցած բոլոր մարտահարվերները և աշխարհին նայել հարթորդի բարձունքից: Ս.Բալայանը եղավ այն կանանցից, որ մոր ու մանկավարժի պատվավոր ու սուրբ կոչումները կարողացան միահյուսել ու մի ամբողջականության մեջ դրսևորել:

Ծնվել է 1955թ.-ի օգոստոսի 14-ին Մարտունու շրջանի Չերիեր գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1972թ.-ին: Նույն թվականին ընդունվել է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, որն ավարտել է 1976թ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո աշխատել է Չերիերի և ճարտարի միջնակարգ դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1980թ. տեղափոխվել է Մարտունու քաղաք և աշխատանքի անցել կենտրոնական գրադարանի մեթոդական բաժնում՝ որպես խմբագիր: 1995թ նորից վերադարձել է մանկավարժական գործունեությանը և առ այսօր աշխատում է Մարտունու քաղաքի Մ.Մաշտոցի անվան հ.2 հիմնական դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Տիկին Բալայանը երեք արու զավակների մայր է: Կարծում են՝ որոշիչ եղավ նրա՝ մոր և ուսուցչուհու դաստիարակությունը որդիների կրթության և դաստիարակության գործում, քանզի նրանց որպես կյանքի ուղեկից և գերագույն նպատակ ընտրեցին հայրենիքի պաշտպանության սուրբ գործը: Կրտսեր որդին՝ Կարենը, հանգամանքների բերումով, թողեց ծառայությունը և տեղափոխվեց ՌԳ, սակայն մյուս՝ Գարիկ և Վանիկ որդիները շարունակեցին՝ հասնելով փոխգնդապետի կոչման: Ցավոք, Գարիկ որդուն բախտ չվիճակվեց շարունակելու և 2014թ. մայիսի 25-ին դարաբաղա-արդբեջանական հակամարտ գործերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված գործառնություն մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում հակառակորդի կողմից գնդացրային վիրավորում ստացավ և մահացավ ընդամենը 36 տարեկան հասակում: Ի՞նչ կա ծնողի համար առավել թանկ, քան սիրելի զավակների ապահով կյանքն ու երջանկությունը... Ու չնայած ճակատագրի հասցած ծանր հարվածին՝ չկտրվեց Ս.Բալայանը, պատվով ու արժանապատվությամբ ընդունեց ու տարավ այդ մեծ հարվածը:

Այսօր շարունակում է իր գործունեությունը սիրելի ուսուցչուհի: Նա կրթում ու դաստիարակում է իր հերթական սանիկներին՝ նրանցում փորձելով առաջին հերթին սերմանել հայրենիքի, սեփական ժողովրդի հանդեպ սեր ու նվիրումը, զուսարելով մեր ժողովրդի հազարամյակների պատմություն ունեցող հարուստ մշակույթը, հայոց զոր ու գրականությունը: Ուսուցչուհին սիրո ու նվիրումի շնորհիվ իր սաների մեջ ներարկում, սրսկում է ազգային կարևորությունը:

Ս.Բալայանը նաև 5 թոռների (մեկ աղջիկ և 4 տղա) դաստիարակության պատասխանատվություն է իր վրա կրում: Անտաարակույս, նրա բռնած կյանքի ճանապարհը նոր իմաստ ու երանգ է ստանում սիրելի թոռնիկների գոյությամբ: Նա փորձում է չկորցրած հավատն ու կյանքի հանդեպ մեծ սերը շարունակել սերմանել ինչպես սիրելի թոռնիկների, այնպես և սաների մեջ:

Ստեյլա Բալայանն արդեն 60 տարեկան է, չնայած նրան նայելով չես ասի: Իր արտաքին թարմության և բարետեսության մեջ փորձում է խեղդել ամծնական ցավը..., բայց, ախ, այդ դավաճան աչքերը:

Սրտանց շնորհավորենք նրան՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, ինչը, կարծում են, շատ-շատերի սրտի ցանկությունը կլինի: Թող խաղաղությամբ ու բարօրությամբ անցնի սիրելի ուսուցչուհու հետագա կյանքը: Թող նրա սիրող ու հոգատար սիրտը փոթորկվի միայն երջանիկ լուրերի ազդեցությունից: Թող կյանքը միայն հաճելի անակնկալներ բերի այս բարի, մարդկային լավագույն հատկանիշներով օժտված մորն ու կնոջը:

Կարինե ԴԱՂԱՍՅԱՆ

Լուսիկա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Հայտարարվում է մրցույթ՝ Մարտակերտի շրջանի ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Վանքի մ/դ** - ֆիզկուլտուրա՝ 22 ժամ,
- Վերին Դոռաթաղի մ/դ** - քիմիա՝ 10 ժամ,
- Թալիշի մ/դ** - աշխարհագրություն՝ 10 ժամ, մաթեմատիկա՝ 12 ժամ,
- Մոխրաթաղի մ/դ** - ֆիզիկա՝ 8 ժամ, ռուսաց լեզու՝ 18 ժամ, դասվար՝ 1 հաստիք,
- Չլորանի մ/դ** - պատմություն՝ 7 ժամ, կերպարվեստ՝ 2 ժամ, տեխնոլոգիա՝ 4 ժամ, երաժշտություն՝ 2 ժամ, դաստիարակ՝ 1 հաստիք, -քիմիա՝ 13 ժամ,
- Սեյտուլանի մ/դ** - շախմատ՝ 6 ժամ, երաժշտություն՝ 6 ժամ,
- Գետավանի մ/դ** - զինղեկ՝ 1 հաստիք, մաթեմատիկա՝ 8 ժամ,
- Հար-Գոմերի մ/դ** - զինղեկ՝ 1 հաստիք, մաթեմատիկա՝ 18 ժամ, ֆիզիկա՝ 12 ժամ,
- Մաղավուզի մ/դ** - օտար լեզու՝ 18 ժամ, ռուսաց լեզու՝ 24 ժամ, մաթեմատիկա՝ 11 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ,
- Սեծ Շենի մ/դ** - քիմիա՝ 9 ժամ, կենսաբանություն՝ 10 ժամ զինղեկ՝ 1 հաստիք, մաթեմատիկա՝ 10 ժամ,
- Քուլատակի մ/դ** - ֆիզիկա՝ 14 ժամ, աշխարհագրություն՝ 10 ժամ, - մաթեմատիկա՝ 8 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ,
- Ջազիկի մ/դ** - ֆիզկուլտուրա՝ 7 ժամ,
- Կուսապատի մ/դ** - աշխարհագրություն՝ 10 ժամ, ՀԵՊ՝ 7 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, դասվար՝ 21 ժամ, ֆիզկուլտուրա՝ 22,5 ժամ,
- Չափարի մ/դ** - ֆիզիկա՝ 13 ժամ, ֆիզկուլտուրա՝ 12 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, - զինղեկ՝ 1 հաստիք,
- Մատաղիսի մ/դ** - ֆիզիկա՝ 14 ժամ,
- Պողոսագոմերի մ/դ** - ֆիզկուլտուրա՝ 9 ժամ,
- Կիչանի մ/դ** - ֆիզիկա՝ 4 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ, ինֆորմատիկա՝ 3 ժամ,
- ՆորՄարաղայի մ/դ** - ֆիզկուլտուրա՝ 10 ժամ,
- Ծմակահողի մ /դ** - մաթեմատիկա՝ 15 ժամ, դասվար՝ 12 ժամ, երաժշտություն՝ 6 ժամ,
- Կարմիրավանի մ/դ** - ֆիզիկա՝ 3 ժամ, օտար լեզու՝ 6 ժամ, աշխարհագրություն՝ 4 ժամ, մաթեմատիկա՝ 10 ժամ,
- Հայկաջուրի հ/դ**
- Հաթերքի մ/դ**
- Ջարդախաչի հ/դ**

Հայտարարվում է մրցույթ՝ Հադրուբի շրջանի

ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Ուխտաձորի մ/դ** - մաթեմատիկա՝ 14 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ,
- Ալնաղբյուրի մ/դ** - աշխարհագրություն՝ 8 ժամ, ինֆորմատիկա՝ 6 ժամ,
- Տողի մ/դ** - ինֆորմատիկա՝ 7 ժամ, շախմատ՝ 6 ժամ,
- Ազոխի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 6 ժամ
- Առաջամուղի մ/դ** - ֆիզիկա՝ 9 ժամ, ֆիզկուլտուրա՝ 18 ժամ, հասարակագիտություն՝ 4 ժամ, Հայոց եկեղեցու պատմություն՝ 6 ժամ,
- Բանաձորի հ/դ** - մաթեմատիկա՝ 22 ժամ, ֆիզիկա՝ 5 ժամ, քիմիա՝ 2 ժամ, կենսաբանություն՝ 5 ժամ, բնագիտություն՝ 2 ժամ, անգլերեն՝ 10 ժամ -անգլերեն՝ 6 ժամ,
- Հակակուի հ/դ** - ռուսաց լեզու՝ 18 ժամ, քիմիա և կենսաբանություն՝ 19 ժամ,
- Խանձաձորի հ/դ** - աշխարհագրություն՝ 9 ժամ, ՆԶՊ (զինղեկ)՝ 1 հաստիք, -ՆԶՊ (զինղեկ)՝ 1 հաստիք, ֆիզիկա՝ 12 ժամ, ֆիզկուլտուրա՝ 20 ժամ, ռուսաց լեզու՝ 24 ժամ,
- Արևշատի հ/դ** - քիմիա՝ 9 ժամ, անգլերեն՝ 16 ժամ, -դասվար՝ 20 ժամ,
- Առաքելի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 16 ժամ,
- Դրախտիկի մ/դ** - ռուսաց լեզու՝ 12 ժամ, պատմություն՝ 10 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, ֆիզկուլտուրա՝ 10 ժամ:

Հայտարարվում է մրցույթ՝ Քաշաթաղի շրջանի

ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Բերձորի հ. 1 մ/դ** - մաթեմատիկա՝ 15 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ
- Քարեգահի մ/դ** - ֆիզիկա՝ 7 ժամ, դասվար՝ 1 դրույք, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ
- Վարդուտի մ/դ** - ռուսաց լեզու՝ 14 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 14 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ
- Արտաշավի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 22 ժամ,
- Ղազարապատի մ/դ** - պատմություն՝ 15 ժամ,
- Գանձայի մ/դ** - զինղեկ՝ 0,5 դրույք, ՔՊՇՊ՝ 0,3 դրույք,
- Բազմատուսի մ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 11 ժամ, անգլերեն՝ 8 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ
- Դրախտաձորի հ/դ** - ռուսաց լեզու՝ 12 ժամ, անգլերեն՝ 8 ժամ,
- Վաղազինի մ/դ** - ռուսաց լեզու՝ 10 ժամ, պատմություն՝ 17 ժամ, անգլերեն՝ 10 ժամ,
- Վակունիսի հ/դ** - ռուսաց լեզու՝ 14 ժամ, մաթեմատիկա՝ 15 ժամ,
- Շալուայի մ/դ** - անգլերեն՝ 6 ժամ,
- Մովսեսաշենի հ/դ** - ռուսաց լեզու՝ 6 ժամ, օտար լեզու՝ 6 ժամ,
- Ներքին Սուսի մ/դ** - պատմություն՝ 22 ժամ, դասվար՝ 1 դրույք,
- Արվականի հ/դ** - հայոց լեզու և գրականություն՝ 19 ժամ, մաթեմատիկա, ֆիզիկա՝ 14 ժամ,
- Սոնասարի մ/դ** - մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա՝ 17 ժամ,
- Տամուտի հ/դ** - ռուսաց լեզու՝ 11 ժամ, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա՝ 13 ժամ,
- Մոշաթաղի մ/դ** - պատմություն՝ 15 ժամ,
- Միրիկի մ/դ** - ռուսաց լեզու՝ 8 ժամ,

- Ուռեկանի մ/դ** - ֆիզիկա՝ 7 ժամ,
- Սարատակի մ/դ** - աշխարհագրություն՝ 10 ժամ,
- Մարտունաշենի մ/դ** - պատմություն և հասարակագիտություն՝ 16 ժամ,
- Տիգրանավանի մ/դ** - ֆիզիկա՝ 8 ժամ, ֆիզկուլտուրա՝ 12 ժամ,
- Գետամեջի մ/դ** - մաթեմատիկա՝ 27 ժամ,
- Իշխանաձորի մ/դ** - մաթեմատիկա՝ 25 ժամ, ռուսաց լեզու՝ 10 ժամ,
- Քաշունիցի հ/դ** - ռուսաց լեզու՝ 8 ժամ, օտար լեզու՝ 6 ժամ,
- Արծվաշենի հ/դ** - զինղեկ՝ 0,5 դրույք, ՔՊՇՊ՝ 0,3 դրույք,
- Երիցվանքի մ/դ** - աշխարհագրություն՝ 9 ժամ, պատմություն՝ 22 ժամ,
- Աղաձորի մ/դ** - ռուսաց լեզու՝ 20 ժամ,
- Կունայրի մ/դ** - ռուսաց լեզու՝ 22 ժամ,
- Վանի մ/դ** - ռուսաց լեզու՝ 16 ժամ, օտար լեզու՝ 10 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ, պատմություն, հասարակագիտություն՝ 22 ժամ,
- Ծորաձորի հ/դ** - ռուսաց լեզու՝ 6 ժամ, պատմություն՝ 11 ժամ,
- Ալաշկերտ** - անգլերեն՝ 12 ժամ, ռուսաց լեզու՝ 10 ժամ:

Հայտարարվում է մրցույթ՝ Շուշիի շրջանի

ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Քարին տակի մ/դ** - դասվար՝ 20 ժամ, հայոց լեզու և գրականություն՝ 11 ժամ,
- Եղծահողի մ/դ** - կենսաբանություն՝ 8 ժամ, քիմիա՝ 6 ժամ, ֆիզիկա՝ 9 ժամ, աշխարհագրություն՝ 8 ժամ, պատմություն՝ 18 ժամ,
- Սեծ Շենի մ/դ** - քիմիա՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, պատմություն՝ 16 ժամ, հասարակագիտություն՝ 5 ժամ,
- Հին Շենի հ/դ** - անգլերեն՝ 6 ժամ,
- Լիսագորի մ/դ** - ֆիզիկա՝ 6 ժամ, քիմիա՝ 4 ժամ, պատմություն՝ 12 ժամ, կենսաբանություն՝ 6 ժամ,
- Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոց** - մաթեմատիկա՝ 20 ժամ, ֆիզիկա՝ 6 ժամ:

Հայտարարվում է մրցույթ՝ Ասկերանի շրջանի

ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Պատարայի մ/դ** - ֆիզիկա՝ 7 ժամ,
- Ուղտասարի հ/դ** - քիմիա, կենսաբանություն՝ 15 ժամ,
- Խանցքի հ/դ** - օտար լեզու՝ 12 ժամ,
- Դահրավի հ/դ** - օտար լեզու՝ 8 ժամ,
- Արմենակավանի և Փառուխի մասնաճյուղի դպրոցներ** - մաթեմատիկա, ֆիզիկա՝ 14 ժամ,
- Ծաղկաշենի մ/դ** - ՆԶՊ՝ 1 հաստիք,
- Խնամախի մ/դ** - ֆիզիկա՝ 12 ժամ:

Հայտարարվում է մրցույթ՝ Մարտունու շրջանի

ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար

- Մարտունու հ.1 հ/դ** - դասվար՝ 7 ժ,
- Վազգենաշենի մ/դ** - հայոց լեզու՝ 26 ժամ, ռուսաց լեզու՝ 6 ժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013 թվականի 25-26 և 2014 թվականի 23-24 համարներում ու տեղակայված են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայք էջում:

- Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
 - 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ մշտելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
 - 2. Փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 - 3. Անձնագրի պատճենը,
 - 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
 - 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 - 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
 - 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 - 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինզբոյլ:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
- Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 24-28-ն ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

<p>ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 14.08.2015թ.:</p>
--	---	---	---	--

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: